ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղար
ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Հակոբյան

Ներկայացնում եմ հաշվետվություն 2023 թվականի երկրորդ եռամսյակում իմ կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ:

1. Վարչության աշխատակիցների հետ մասնակցել եմ ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2023-2030 թվականների ռազմավարության և գործողությունների պլանի կազմման ավարտական աշխատանքներին, որը 2023 թվականի մայիսի 10-ին և հունիսի 13-ին ներկայացվեց ՀՀ կառավարության աշխատակազմ նախնական քննարկման:
2. Մասնակցել եմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեում «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը հավատարմագրային կառավարման տալու մասին թեմայով խորհրդակցությանը և ներկայացրել ԿԳՄՍ նախարարության դիրքորոշումը:

   Խորհրդակցությանը մասնակցում էին նաև ՀՀ առողջապահության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և գիտական կենտրոնի ներկայացուցիչները: Որոշվեց հիմք ընդունել մեր նախարարության առաջարկությունը և ստեղծել մասնագիտական հանձնաժողով, հարցը ուսումնասիրելու և գործնական առաջարկություններ ներկայացնելու համար: Ընդգրկվել եմ նախարարի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կազմում:
3. Վարչության ղեկավարությանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆիզկուլտուրային – մարզական հասարակական կազմակերպություններին ֆինանսական աջակցություն հատկացնելու կարգի նախագիծը:
4. Որպես ՀՀ ԿԳՄՍ նախարարության փորձագետ և Համահայկական խաղերի հիմնադիր, մասնակցել եմ ՀԽՀԿ–ի գործադիր կոմիտեի նիստին, որը նվիրված էր ամառային 8-րդ խաղերի կազմակերպման և անցկացման աշխատանքներին:
5. Ներկայումս աշխատում եմ բնագավառի ռազմավարության նախագծում ամրագրված գործուղությունների կատարման ուղղությամբ նյութերի հավաքագրմամբ:

Հարգանքով՝ **Սպորտի քաղաքականության վարչության**
փորձագետ՝ Հարություն Յավրյան

04.07.2023թ.